«2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ 8-ՐԴ ՇՐՋԱՆԻ II ՓՈՒԼ

«2017թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» անվանակարգում հայտարարված մրցույթի 8-րդ շրջանի երկրորդ փուլին ներկայացվում է հինգ հարցից բաղկացած մեկ հարցաշար, մեկ խնդիր, առաջադրանքներ՝ «Հակասություններ և բացահայտումներ» ու «Գրագիտություն և իրազեկվածություն» թեմաներից, ինչպես նաև հոգեմտածողության և սոցիալական կողմնորոշմանը վերաբերող առաջադրանքից:

Հարցաշարի ճիշտ պատասխանները կգնահատվեն յուրաքանչյուրը 2 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորների թիվը կազմում է 10 միավոր:

Խնդրի ճիշտ պատասխանը կգնահատվի 5 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հակասությունների բացահայտման առաջադրանքի ճիշտ պատասխանները կգնահատվի 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

«Գրագիտություն և իրազեկվածություն» խորագրով առաջարկվում է մեկ հարց, որի ճիշտ պատասխանը գնահատվում է 5 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հոգեմտածողության և սոցիալական կողմնորոշմանը վերաբերող առաջադրանքի յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 5 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Ընդհանուր միավորների թիվը կազմում է 25 միավոր:

Երկրորդ փուլին ներկայացված առաջադրանքների ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 55 միավոր:

Երկրորդ փուլին ներկայացված առաջադրանքներից և I-II փուլերի հաշվով առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Երկրորդ փուլին ներկայացված առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2017թ. հունիսի 10-ը: Հարցաշարի և խնդրի ճիշտ պատասխանները կտեղադրվեն **www.gortsq.am** կայքէջում՝ 2017թ. հունիսի 11-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, HR-ի միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշանը, հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2018 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

«2017Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ

1. **Որ դեպքում է, ժամանակավոր անաշխատունակության նպաստի ամբողջ գումարը՝ այդ թվում նաև գործատուի կողմից վճարվող մասը վճարվում ՀՀ պետական բյուջեից (գտնել սխալ պատասխանները):**

   ա) ոչ մի դեպքում.

   բ) միայն կոլեկտիվ պայմանագրով սահմանված դեպքերում.

   գ)բոլոր դեպքերում:

2. **Անձը կամովին համաձայնել է կատարել ոչ նորմալ պայմաններով աշխատանք և նրա հետ կնքվել է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր: Գործատուն պարտավո՞ր է կամավորականի համար ստեղծել նորմալ աշխատանքային պայմաններ:**

   ա) այո, գործատուն պարտավոր է կամավորականի համար ստեղծել նորմալ աշխատանքային պայմաններ.

   բ) գործատուն պարտավոր չէ կամավորականի համար ստեղծել նորմալ աշխատանքային պայմաններ.

   գ) կամավորականների համար նորմալ աշխատանքային պայմաններ ստեղծելու պարտավորությունը կրում է պետությունը:

3. **24-ժամյա հերթափոխով աշխատողն իրավունք ունի նույն կազմակերպությունում աշխատելու համատեղությամբ:**

   ա) այո, իրավունք ունի.

   բ) ոչ իրավունք չունի, քանի որ աշխատաժամանակի ընդհանուր տևողությունը գերազանցում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով շաբաթվա համար սահմանված առավելագույն աշխատաժամանակի տևողությունը.

   գ) աշխատողին համատեղությամբ աշխատանքի իրավունքը տալիս է գործատուն:

4. **Աշխատանքի ընդունվող անձի համար սահմանվել է փորձաշրջան՝ 2 ամիս ժամկետով: Փորձաշրջանի արդյունքները դրական գնահատվելուց անմիջապես հետո աշխատողին տեղափոխման կարգով նշանակել են այլ պաշտոնի: Գործատուն իրավունք ունի՞ աշխատանքի ընդունվող անձի համար փորձաշրջան նախատեսել մի պաշտոնում, իսկ փորձաշրջանից անմիջապես հետո նրան նշանակել այլ պաշտոնում:**

   ա) իրավունք չունի, քանի որ դրանով խախտվում է փորձաշրջանի տրամաբանությունը.

   բ) «ա» պատասխանը տրամաբանական է, սակայն ոչ իրավաչափ: Գործատուն իրավունք ունի աշխատողին տեղափոխել այլ աշխատանքի՝ փորձաշրջանի արդյունքները դրական գնահատելուց անմիջապես հետո.

   գ) գործատուն կարող է փորձաշրջանի արդյունքները գնահատել անբավարար, աշխատողին ազատել աշխատանքից և ընդունել աշխատանքի այն պաշտոնում, որ պաշտոնում նա ցանկանում է:

5. **ՀՀ օրենսդրությամբ հասարակական աշխատանքը լինում է՝**

   ա) վարձատրվող.

   բ) առանց վարձատրության.

   գ) պարգևավճարային:

«2017Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼԻ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Անձնակազմի կառավարման բաժնի աշխատակից Մարտիրոսյանն իր ծանոթների շրջապատում ինժեներ Սահակյանի անձնական տվյալների մասին տեղեկություններ է տարածում, որոնք,

Սահակյանի կարծիքով, վիրավորում են իր պատիվն ու արժանապատվությունը: Սահակյանը կազմակերպության տնօրենից պահանջում է պաշտպանել իր անձնական տվյալներն անօրինական կերպով օգտագործելուց, իսկ Մարտիրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության: Տնօրենը տուգանում է Մարտիրոսյանին՝ նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով: Մարտիրոսյանի և գործատուի միջև ծագում է աշխատանքային վեճ, որը լուծելու համար նրանք դիմում են Աշխատանքի իրավունքի պաշտպանի (հաշտարարի) գրասենյակ:

Դուք եք հաշտարարը: Ի՞նչ օրինական լուծում կառաջարկեք:

Պատասխան

- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 136-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողի անձնական տվյալների մշակման և պաշտպանման՝ սույն օրենսգրքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված կարգը խախտող անձինք օրենքով սահմանված կարգով ենթակա են պատասխանատվության, որի ծավալը սահմանված է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածում:

Ինչպես տեսնում եք գործատուն տուգանք նշանակելու իրավասություն չունի և հետևաբար նրա գործողությունները պետք է որակել ոչ իրավաչափ:

«2017Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼ «ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ»

Սույն բաժնում ներկայացվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածում առկա մի շարք խմբագրական բնույթի փոփոխություն պահանջող արտահայտություններ:

Դուք եք ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորը: Ո՞րն է Ձեր առաջակը:

Ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Պատասխան.

- Ըստ շարադրված տեքստի աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթները ենթակա են պարտադիր կատարման բոլոր գործատուների (քաղաքացիներ կամ կազմակերպություններ) համար՝ անկախ նրանց կազմակերպական-իրավական և սեփականության ձևից: Նախ առաջին հերթին պետք է նշել, որ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթները ենթակա են պարտադիր կատարման, ոչ թե գործատուների համար, այլ գործատուների կողմից և հետո էլ տեքստում տեղին չի օգտագործված «պարտադիր» բառը, քանի որ առանց այդ բառի էլ աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթները ենթակա են կատարման» ձևակերպմամբ պահպանվում է «նորմատիվ իրավական ակտերի դրույթների կատարման» իմպերատիվ ոճը:

Հաջորդ թերությունը վերաբերում է «գործատուների (քաղաքացիներ կամ կազմակերպություններ)» արտահայտությանը: «Գործատուների» բառից հետո փակագծում նշված «քաղաքացիներ կամ կազմակերպություններ» բառերով պարզապես հուշում է կատարվում, թե տվյալ դեպքում գործատու ասելիս որ գործատուներն են նկատի ունենում: Նշվածը հակասում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, ըստ որի գործատու կարող է լինել ոչ թե քաղաքացին (դա աշխատանքային օրենսգրքում մինչև փոփոխություն կատարելը ձևակերպումից է մնացել) այլ ֆիզիկական անձը: Հետևաբար, հաշվի առնելով վերը շարադրվածը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթները ենթակա են կատարման բոլոր գործատուների (ֆիզիկական անձ կամ կազմակերպություններ) կողմից՝ անկախ նրանց կազմակերպական-իրավական և սեփականության ձևից»:

Քննարկվող հոդվածի 7-րդ մասում առկա է ևս մեկ թերություն, որը ենթակա է խմբագրման: Տեքստում շարադրված «քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայություններից» արտահայտությունից հետո օգտագործվում է «և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների» արտահայտությունը, մինչդեռ ՀՀ օրենսդրությամբ այդպիսի ծառայողներ գոյություն չունեն (հին տերմին է): Դրա փոխարեն «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետք է օգտագործել «համայնքային ծառայող» արտահայտությունը:

«2017Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼ

«Գրագիտություն և իրազեկվածություն»

ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ օրենքի որևէ հոդված ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն տվյալ որոշումը համարվել է վերջնական, որն ուժի մեջ է մտել հրապարակման պահից: Որ օրվանից պետք է չկիրառել օրենքի ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված հոդվածը:

Ճիշտ պատասխան գնահատվում է 5 միավոր, սխալ պատասխան՝ 0 միավոր:

Պատասխան

- ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված հոդվածը կիրառվում է տվյալ հարցի վերաբերյալ «ՀՀ Ազգային Ժողովի կողմից տվյալ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:

«2017Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼԻ ՀՈԳԵՄՏԱՇՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Նվազագույն ամսական աշխատավարձ, միջին ամսական աշխատավարձ, տարիքային կենսաթոշակ, կենսաապահովման նվազագույն բյուջե, սպառողական բյուջե, գործազրկության նպաստ: Սրանք են առաջավոր երկրների սոցիալական չափորոշիչները և արդարամտության ռեսուրսը:

Մշակեք մեթոդաբանություն և սոցիալական սանդղակի վրա աճողական կարգով դասակարգեք դրանք՝ ըստ ֆինանսական միջոցների:

Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 5 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Ընդհանուր միավորների թիվը կազմում է 30 միավոր:

Պատասխան –

1. Միջին ամսական աշխատավարձ
2. Տարիքային կենսաթոշակ
3. Սպառողական բյուջե
4. Նվազագույն ամսական աշխատավարձ
5. Գործազրկության նպաստ
6. Կենսաապահովման նվազագույն բյուջե